տէրեր, որոնց շահերը տարբերւում են հայ գանգուածների շահերից։

Պէտք է, սակայն, ասել, որ վերջին ժամանակներս լեհահայոց մէջ նորից զգացւում է ազգային ինքնաճանաչման ոգու ուժեղ լարում։ Սկսել է հրատարակուել "Poslaniec Sw. Grzegorza" անունով հայկական կեանքին նուիրուած մի ամսագիր։ Լոյս են տեսնում յօդուածներ ու լուրեր՝ նուիրուած հայկական հարցին։ Հրապարակում երեւում են նոր գրքեր ու հետազօտութիւններ անցեալի մասին։ Եւ լեհահայերի սիրտը ձգտում է բաբախել ներդաշնակ համահայկական սրտի հետ։

V

ԵԱՆ ԵՐՐՈՐԴ ՍՈԲԵՍԿԻԻ ԾՐԱԳԻՐԸ*)

Լեհահայոց գունագեղ կեանքում տեղի է ունեցել մի դէպք, որի մօտից անկարելի է անցնել լռութեամբ։ Այդ՝ Եան Սոբեսկիի ծրագիրն է Հայաստանի թագաւորութեան վերականգման մասին։

ԺԷ. դարում Թիւրքերը ներկայացնում էին ահաւոր վտանգ ամբողջ Արեւելեան Եւրոպայի համար։ Լեհաստանի համար նրանք առանձնապէս իրական մեծ վտանգ էին, որ սպառնում էր նոյնիսկ պետութեան գոյութեան։ Եան Սոբեսկիի ամբողջ կեանքը, թէ՛ արքայական մեծ հեթման եղած ժամանակը եւ թէ՛ Լեհաստանի թագաւոր ընտրուելուց յետոյ, անցաւ պատերազմների մէջ Թիւրքերի հետ։

Ուստի, բնական է, որ նրա միտքը միշտ գործում էր Թիւրքերին ուժաթափելու ուղղութեամբ։ Նա շատ շուտով եկաւ այն համոզման, որ Թիւրքական շարժումը դէպի Եւրոպա եթէ ոչ իսպառ վերջացնելու, գէթ նրա թուլացման համար անհրաժեշտ է գործակցութիւն հաստատել պարսից շահի հետ՝ ընդդէմ Թիւրքիայի եւ Թիւրքիայի արեւելեան սահմանների վրայ հիմնել Լեհաստանից կախում ունեցող քրիստոնեայ մի պետութիւն, որը ընդունակ լինէր օգնել Լեհաստանին Թիւրքիայի դէմ մղած պատերազմներում։

Դաշինքը Պարսկաստանի հետ Սոբեսկին մշակեց պապի հաճութեամբ։ Այդ նպատակով թէ՛ նա եւ թէ պապը մէկից աւելի անգամներ դեսպանութիւններ ուղարկեցին Պարսկաստան, եւ դեսպաններ էին նշանակւում մի կողմից Լեհաստանի ներկայացուցիչները, սովորաբար հայեր, միւս կողմից պապի պատուիրակները՝ կաթոլիկ միսիոնարներ։

Շահը, ըստ երեւոյթին, սիրով էր ընդունում Սոբեսկիի ծրագիրները։ Այսպէս, Կրուսինսկին պատմում է, որ ի պատիւ կաթոլիկ միսիոնարների տրուած հանդիսաւոր մի հացկերոյթի միջոցին Շահ Սուլէյմանը ասել է, որ ինքը շատ է կամենում, որ պապը, իբրեւ բարձրագոյն պետ Քրիստոսի վեհափառութիւնը պաշտպանողների եւ հաւատացեալների հայր, համոզէ Եւրոպայի թագաւորներին, Շահի հետ միաժամանակ, ցամաքից ու ծովից պատերազմ սկսելու Թիւրքիայի դէմ*)։

Իսկ իր ծրագրի երկրորդ մասը, այսինքն՝ Թիւրքիայի արեւելեան սահմաններում քրիստոնեայ պետութեան ստեղծումը, Սոբեսկին մշակում էր գաղտնի, հայերի հետ միասին, ծածկելով իր նպատակը մանաւորապէս պարսից շահից, որի շահերը մեծապէս պիտի տուժէին այդ ծրագրով։

Սոբեսկիի գլխաւոր գործակիցը այս հարցում մի հայ էր՝ բաւական բարձրադղորդ անունով՝ Կոնստանտին Սուլէյման Կոմս Սիւրիոյ**)։

---

*) Տե՛ս Bargaz, "Sobieski a Ormiane", Dzj ennick Literacki, 1854. եւ նոյն Baracz-ի "Rys Dziejow Ormianskich"։ Ապա Gromnicki, "Ormiane w Polsce", ուր տրուած են մի քանի տեղեկութիւններ՝ քաղուած նոյն Baracz-ից։

Մակլերը իր Rapport-ում հակիրճ կերպով ամփոփում է Գրոմնիցկիի գրքոյկը՝ համառօտ կրկնելով նրա տեղեկութիւնները։

*) Krusinski, "Tragica belli Persici, I, էջ 142։

**) Կոնստանտին Սուլէյման Կոմս Սիւրիոյ, երբեմն յայտնի Կոնստանտին Մարոնիտ անունով, սիւրիացի մի հայ էր։ Տակաւին պատանի՝ նա ընկաւ Պորտուգալիայի թագաւորի արքունիքը, ուր եւ դաստիարակութիւն ստացաւ թագաւորի մանկլաւիկների հետ։ Հիանալի կերպով գիտէր արեւելեան եւ եւրոպական լեզուները։